ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)**	**Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
	1	**2**	**3**	**4**	**5**
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «կարգավորում է» բառերից հետո լրացնել «փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները,» բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
2.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասով փոփոխվող 4-րդ մասի 2-րդ նախադասությունը հանել: 2) 2-րդ մասով փոփոխվող 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «5. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքում անձն իրավունք ունի	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			դիմելու նոր արտոնագիր ստանալու համար արտոնագրի գործողությունը դադարեցնելուց մեկ տարի անց:»: 3) լրացնել նոր 8-րդ մաս. «8. Փաստաբանների պալատի հետ փոխհարաբերություններում փաստաբանը համարվում է իր հետ կապված գործընթացի վերաբերյալ պատշաճ ծանուցված, եթե ծանուցումն ուղարկվել է նրա էլեկտրոնային փոստի հասցեով, և եռօրյա ժամկետում առկա է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստում: Եթե Փաստաբանների պալատի աշխատակիցը կամ մարմինը եռօրյա ժամկետում չի ստանում ծանուցումը կարդալու մասին էլեկտրոնային հավաստում, ապա ծանուցագիրն ուղարկվում է փոստային կապի միջոցով՝ հետադարձ ծանուցմամբ, որի դեպքում փաստաբանը համարվում է պատշաճ ծանուցված, եթե ծանուցումն		

			ուղարկելուց հետո տասչորսերորդ օրը ստացվում է հետադարձ ծանուցում: Եթե ծանուցագիրը փոստային կապի միջոցով ուղարկելուց հետո տասնչորսերորդ օրը հետադարձ ծանուցում չի ստացվում և դեռևս առկա չէ էլեկտրոնային ծանուցումը կարդալու մասին էլեկտրոնային հավաստում, ապա ծանուցումը հրապարակվում է փաստաբանների պալատի պաշտոնական ինտերնետային կայքում: Տվյալ դեպքում փաստաբանը համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը տեղադրվելու օրվան հաջորդող տասներորդ օրվանից:»:		
3.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասով փոփոխվող 3-րդ մասում «1-4-րդ» բառերը փոխարինել «1-ին և 4-րդ»	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
4.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 12-րդ հոդված	Նախագծի 12-րդ հոդվածով փոփոխվող 43-րդ հոդվածի 2-րդ մասի «ձայների մեծամասնությամբ» բառերը փոխարինել «ձայների առնվազն	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			երկու երրորդով՝ փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված կարգով և դեպքերում:»		
5.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 14-րդ հոդված	Նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող 1.1-րդ մասի «5-րդ կետով» բառերից հետո լրացնել «կամ 36-րդ հոդվածի 5-րդ մասով» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
6.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 15-րդ հոդված	Նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասի «եռամսյա» բառը փոխարինել «վեցամսյա» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**